# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 048-26

**<u>  <<19>>_փետրվարի 2026թ</u>** **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ԴԵԼՏԱՇԻՆ>> ՍՊԸ***

***Տնօրեն՝ Վ. ԿՈԲԵԼՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ <u>924 012.06</u> հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 3 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Սիրեկանյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր</u>

*Պատվիրատու՝ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ԴԵԼՏԱՇԻՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Վ. ԿՈԲԵԼՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ փորձաքննության է ենթարկել "ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում", օբյեկտի նախագծային փաստաթղթերը հետևյալ կազմով՝

Գիրք 1 – Աշխատանքի կազմակերպման նախագիծ

Գիրք 2.1 – Աշխատանքային գծագրեր(Հիդրոտեխնիկական մաս)

Գիրք 2.2 – Աշխատանքային գծագրեր(Ճարտարապետական մաս)

Գիրք 2.3 – Աշխատանքային գծագրեր(Կոնստրուկտորական մաս)

Գիրք 2.4 – Աշխատանքային գծագրեր(Էլետրական մաս)

Գիրք 3 – Ծավալաթերթ- նախահաշիվ

Գիրք 4 – Նախահաշիվներ

Համաձայն տեխնիկական բնութագրի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ նախագծով նախատեսված է Կապուտան բնակավայրի 130հա վարելահողերի և 115,5հա տնամերձ հողերի ոռոգումն իրականացնել Կոտայքի մայր ջրանցքից, վերականգնելով նախկինում գործող ոռոգման մեխանիկական համակարգը:

Նախագծով նախատեսված է՝

• Վերականգնել Կոտայքի մայր ջրանցքից սկիզբ առնող սեղանաձև ջրանցքը:

• Կառուցել I-ին աստիճանի պոմպակայան:

• Կառուցել I-ին աստիճանի պոմպակայանի էլեկտրասնուցման համակարգ:

• Վերակառուցել I-ին աստիճանի պոմպակայանի մղման խողովակաշարը, օգտագործելով առկա պողպատյա խողովակները:

• Կառուցել II-րդ աստիճանի պոմպակայան:

• Կառուցել II-րդ աստիճանի պոմպակայանի էլեկտրասնուցման համակարգ:

• Կառուցել II-րդ աստիճանի պոմպակայանի մղման խողովակաշարը մինչև Կապուտան բնակավայրի հյուսիս-արևելյան մասում նախատեսվող ՕԿՋ:

• Կառուցել 5000մ3 օգտակար ծավալով ՕԿՋ:

• Կառուցել Կապուտան բնակավայրի նոր կառուցված ՕԿՋ-ից սկիզբ առնող ոռոգման ներքին ցանց պոլիէթիլենե և պողպատյա խողովակներով: Յուրաքանչյուր բաժանորդի համար տեղադրվում է ջրթող փականներ:

Նախագծում ներկայացված են տոպոգրաֆիական հետազոտությունների, ինժեներա-երկրաբանական հետազոտությունների և ակնադիտական ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև բոլոր կառուցվածքների մանրամասն նկարագրությունը:Բոլոր կառուցվածքներին տրված է նախագծային լուծումներ, մանրամասն գծագրերը բերված են Գիրք2.1-2.4 Աշխատանքային գծագրեր:

Նախագիծը մշակված է ՀՀ օրենսդրության նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան, իրականացվել են ջրապահանջի հաշվարկ, I-ին և II-րդ աստիճանի պոմպակայանների նախագծային պարամետրերի, մղման խողովակաշարերի և պոմպային ագրեգատների ընտրության, պոմպակայանի ջրընդունիչ խցի, 5000մ3 օգտակար ծավալով ՕԿՋ–ի ոռոգման ներքին ցանցի հաշվարկները և բերված են Գիրք 1. Աշխատանքի կազմակերպման նախագիծ:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է՝ **924 012.06** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2458.44** և մեքենաների շահագործման ինդեքսը **3048.1**

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N07 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան*